ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հուլիսի 2024 թվականի N 1055 - Ա

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9.1-ին կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված) կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիներին՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում

նշանակալի նվաճումներ ունեցող և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիներին՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և ասպիրանտուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիներին՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով Դավիթ Արմանի Խաչատրյանի, 2-րդ ենթակետով Կարեն Սամվելի Քոչարյանի, 3-րդ ենթակետով Միեր Գարեգինի Մելքոնյանի, 8-րդ ենթակետով Հայկ Գևորգի Անդրիասյանի, 10-րդ ենթակետով Համլետ Սուրենի Կարայանի, 11-րդ ենթակետով Արտաշես Ավետիքի Չալաբյանի, 3-րդ կետի 1-ին ենթակետով Մարկ Միքայելի Ղալումյանի, 4-րդ ենթակետով Արթուր Գրիգորի Մնացականյանի, 5-րդ ենթակետով Միքայել Տիգրանի Ձրբաշյանի, 9-րդ ենթակետով Էդուարդ Ալեքսանդրի Գրիգորյանի, 10-րդ ենթակետով Հարություն Արամի Մաջարյանի, 11-րդ ենթակետով Ռաֆֆի Ռոդիոնի Չալյանի, 12-րդ ենթակետով Գոռ Սասունի Աբաղյանի, 21-րդ ենթակետով Մավրիկ Անդրեյի Գրիգորյանի, 22-րդ ենթակետով Ռուբեն Արտակի Մարկոսյանի, 23-րդ ենթակետով Աբգար Սամվելի Իվանյանի, 24-րդ ենթակետով Տիգրան Կարենի Սահակյանի, 27-րդ ենթակետով Նարեկ Նաիրիի Գալստյանի, 29-րդ ենթակետով Գոռ Արմենի Աշոտյանի, 32-րդ ենթակետով Հայկ Արամի Կարախանյանի, 33-րդ ենթակետով Խաչատուր Էդգարի Հայրապետյանի, 35-րդ ենթակետով Տիգրան Առնոյի Մոսիկյանի, 38-րդ ենթակետով Տարոն Վաղարշակի Մկրտումյանի, 40-րդ ենթակետով Ալեքսանդր Վարդանի Սաղյանի, 43-րդ ենթակետով Տիգրան Վարդանի Բաղալյանի, 49-րդ ենթակետով Դավիթ Կարենի Բեզոյանի, 51-րդ ենթակետով Դավիթ կարենի Նազարյանի, 54-րդ ենթակետով Դավիթ Արթուրի Բոյնագրյանի, 55-րդ ենթակետով Ռոբերտ Աշոտի Բուդաղյանի, 57-րդ ենթակետով Արա Տիգրանի Սիմոնյանի, 59-րդ ենթակետով Միքայել Վիգենի Բարսեղյանի, 61-րդ ենթակետով Ռոման Դավիթի Ստեփանյանի, 63-րդ ենթակետով Արեն Նվերի Հասրաթյանի, 64-րդ ենթակետով Անդրանիկ Էդգարի Հունանյանի, 74-րդ ենթակետով Վահե

Վահրամի Սահրադյանի մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց 18 տարին լրանալուց հետո:

5. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետով Արթուր Ռաֆիկի Դավթյանի, 3-րդ կետի 26-րդ ենթակետով Արսեն Տիգրանի Խաչատրյանի, 65-րդ ենթակետով Դավիթ Մխիթարի Հայրապետյանի, 71-րդ ենթակետով Մաքսիմ Գագիկի Երվանդտյանի, 73-րդ ենթակետով Էմիլ Արմենի Սարդարյանի, N 2 հավելվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետով Սարգիս Կարենի Ղույյանի մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց այլ հիմքով ստացած տարկետումը դադարելու օրվանից:

6. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դադարեցված է համարվում N 2 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով Վլադիմիր Մնացականի Մարտիրոսյանին, 3-րդ ենթակետով Էմիլ Վարդանի Մարգարյանին, 2-րդ կետի 1-ին ենթակետով Գագիկ Արտակի Մարտիրոսյանին, 4-րդ կետով Խաչատուր Արմենի Դալլաքյանին, 5-րդ ենթակետով Դավիթ Միհրի Գրիգորյանին, 3-րդ կետի 1-ին ենթակետով Անդրանիկ Արթուրի Առաքելյանին, 2-րդ ենթակետով Էրիկ Մերուժանի Կլեջյանին, 4-րդ կետով Վարդան Թրահելի Վարդանյանին, N 3 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով Հակոբ Տիգրանի Չախոյանին, 3-րդ ենթակետով Պավել Ստեփանի Ղազարյանին, 4-րդ ենթակետով Վահան Վահանի Գեղամյանին, 5-րդ ենթակետով Արտյոմ Ռուբենի Գևորգյանին և 11-րդ ենթակետով Դավիթ Գևորգի Գևորգյանին նախկինում տրված տարկետումները, և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալու մասին» N 99-Ա որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 5-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2021 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1069-Ա որոշման N 1 հավելվածի 1-ին կետը, 2-րդ կետի 1-ին ենթակետը, 3-րդ կետի 13-րդ ենթակետը, 4-րդ

կետի 1-ին ենթակետը, 5-րդ կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 13-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1337-Ա որոշման N 1 հավելվածի 4.1-ին և 4.2-րդ կետերը, 5-րդ կետի 4-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 16-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալու մասին» N 36-Ա որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1111-Ա որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետերը:

7. Սահմանել, որ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիների համար սույն որոշմամբ տրված տարկետումներն ուժի մեջ են մտնում մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ ներկայացված՝ համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա (իսկ ընդունելության ավելի ուշ ժամկետների դեպքում՝ տվյալ բուհից տեղեկանք ընդունվելու ժամկետների մասին): Եթե մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիներն իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ չեն ներկայացնում համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու կամ ընդունելությունը ավելի ուշ լինելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք, ապա նրանք համարվում են սույն

որոշման շրջանակներում տարկետման իրավունք չունեցող և ենթակա են պարտադիր զինվորական ծառայության՝ հայտարարված 2024 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ